Բաքվի հայոց բանահյուսություն. Երևան, «Զանգակ–97» հրատ., 2004, 380 էջ:

Պատմական ճակատագիրը դաժան փորձություններ ենթարկեց հայ ժողովրդին: XX դարասկզբին սրածվեց մի ամբողջ ազգ: Նրա փրկված բեկորները, իրենց բնօրրանը կորցրած, ցրվեցին աշխարհով մեկ: Հայրենի եղերքի ավանդույթները, յուրօրինակ բառուբաներ տասնամյակների ընթացքում սփռվեցին հանդեսների ու պարբերականների, երբեմն էլ առանձին ժողովածուների էջերում: Ավելի ուշ ամփոփվելով պատմագրական տարբեր շրջաններն ընդգրկող հրատարակություններում («Հայ ժողովրդական հեքիաթներ», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» և այլն), բանահյուսական և ազգագրական նյութերը մեծ առաքելություն ունեին հավաստելու, որ դժվար է ընկճել հայի ոգին: Հայը, հակառակ բոլոր արհավիրքներին, ինչպես նշվում է գրախոսվող ժողովածուում, «Հարյուրամյակի 3-րդ եղեռնից հետո էլ հասավ նոր ժամանակների լույսին» ընթերցողի սեղանին դնելով «Բաքվի հայոց բանահյուսությունը»:

Ժողովածուի ծնունդը դժվարին էր: Այն ծնվեց Հայաստանի Ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժնում, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աարդիս Հարությունյանի խմբագրությամբ՝ ի հիշատակ ադրբեջանցի թուրքերի բռնարարքներին զոհ դարձած, անհետ կորած ու անչիրիմ մեր հայրենակիցների: Ծնվեց ժողովրդագիտության արժեքը գիտակցող ազնվագույն մտավորական, Արցախի հոգսերով մտահոգ պարոն Գուրգեն Մելիքյանի սիրահոժար աջակցությամբ, որին իրենց խորը երախտագիտությունն են հայտնում կազմողները ինստիտուտի գիտաշխատողներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը:

Ինչպես ամեն մի երկար սպասված ծնունդ՝ ժողովածուն ցանկալի էր, որովհետև առաջին անգամ է Բաքվի հայոց բանահյուսությունն ընթերցողին ներկայանում ամբողջական բովանդակությամբ և ժանրային-գեղարվեստական տեսակետից համեմատաբար անթերի բանահյուսական հազվագյուտ նմուշներով: Ժողովածուի պատմաբանասիրական ակնարկում կազմողները լուսաբանում են Բաքվում հայերի հաստատման պատմությունը, տեղեկություններ հաղորդում նրանց ստեղծած հոգևոր և նյութական արժեքների վերաբերյալ: Քննության են առնվում բանահյուսական նյութերի ժանրային առանձնահատկությունները, ժամանակի և տարածության մեջ կրած տարաբնույթ ձևափոխություններն ու ավանդապահության մակարդակը:

Աղբյուրները վկայում են, որ տակավին վաղ միջնադարում հայերը Ապշերոնյան թերակղզում և Բաքվում ունեցել են իրենց պաշտամունքային օջախները: 1724 թ. Բաքու այցելած Պետրոս I-ը բավարարել է հայերի խնդրանքը՝ թույլատրելով նրանց բնակություն հաստատել մերձկասպյան շրջաններում: Լինելով ցարական Ռուսաստանի նավթարդյունաբերության կենտրոն՝ Բաքուն դեպի իրեն է ձգում հայերի մի քանի սերունդ: Էթնիկական ճնշումների և ազգագրական փոփոխությունների ենթարկվելով արցախահայերը թողնում են բնօրրանն ու մեկնում Բաքու՝ իրենց գործիմացության և անսպառ եռանդի շնորհիվ ձեռք բերում մեծ հարստության, նպաստում քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճմանը: Խնամքով նախապատրաստված ռազմավարությամբ՝ Ադրբեջանն այդ եղանակով իրականացնում էր Արցախի հայաթափման գործընթացը:

Ինչպես Արևելյան Անդրկովկասի ողջ հայությունը XX դ., Բաքուն նույնպես ապրում է ցեղասպանության երեք փուլ: 1905 թ. փետրվարի 6–10-ը Բաքվում բարբարոսաբար սպանվում են 205 հայ, այդ

թվում բազմաթիվ կանայք ու երեխաներ: 1918 թ. սեպտեմբերյան ջարդերին զոհ է գնում Բաքվի հայության շուրջ 33%-ը՝ 30 հազար մարդ: 1988-ին սկիզբ առած արցախահայության ազգային-ազատագրական պայքարը խեղդելու նպատակով Սումգայիթում սկսվում են հայկական առաջին ջարդերը (1988 թ. փետրվարի 27–29): Բաքվում հաճախակի դարձած բռնությունները հանգեցնում են 1990 թ. հունվարյան զանգվածային բռնագաղթին: Բաքվի հայությունն ապրում է հարյուրամյակի 3-րդ եղեռնը՝ վերստին դառնալով թուրք-թաթարների ցեղային բնազդի զոհը: 1990-ական թվականներին իրենց շեն ու ծաղկուն օջախները, պապերի շիրիմները թողած Բաքվի հայության հետ մեկտեղ աշխարհով մեկ սփռվում են նաև նրանց հիշողության մեջ անթեղված հոգևոր արժեքները:

Ժողովածուում ներկայացված բնագրերում մեծ մասամբ պահպանված են բարբառային յուրահատկությունները, թեև տեղաշարժերը բարբառային նրբերանգների խաթարման պատճառ են դարձել: Բանասացների բառապաշարում, ինչպես նկատում են ժողովածուն կազմող բանագետները, առկա է լեզվաբարբառային երեք շերտերի՝ բնօրրանի, օտար միջավայրի, Երևանի գրական լեզվի ձուլման գործընթացը: Ցուրաքանչյուր համայնք, գյուղ կամ քաղաք ցայսօր կառուցվում է կենտրոն-հրապարակ սկզբունքով: Այդ հրապարակները դառնում են զանգվածային հավաքատեղիներ, որտեղ հարգվում են դիպուկ խոսքը, հումորն ու սրախոսությունը: Ճիշտ նույն կերպ Շուշիի «Թոփխանա» հրապարակից էր ծայր առնում ժողովրդական բանահյուսությունը: Որոշ բանասացների վկայությամբ 1921–1922 թթ. Բաքվի հայերն իրենց համար հատուկ հավաքատեղի էին ընտրել «Նասոսնի ստանցիա» կոչված վայրն ու «Բարուն բաղ» անունով հայտնի այգին: Տեղեկատվական այդ յուրօրինակ միջավայրում Բաքվի հայերը պատմում էին բնօրրանի հետ կապված հիշողություններ, մեծերից լսած զրույցներ, հեքիաթներ ու զվարճապատումներ: Բանահյուսական նյութերի պահպանման գործում կարևոր դեր է կատարել նաև Հայկաշեն («Էրմանիքենդ») կոչված թաղամասը. այնտեղ ապրող հայերի համախումբ կենսակերպը. բնօրրանի հետ ունեցած նրանց մշտական չփումները:

Ժողովածուում ընդգրկված բանահյուսական բնագրերի գրառումները ներկայացնում են ժամանակագրական երեք շերտ՝ 1977 թ., 1985–1986 թթ., 1994–1999 թթ.: Առաջին շերտը կազմված է բանահավաք Բարխուդար Ղազիյանի կողմից Բաքվում գրառված նյութերից: Երկրորդ՝ ստվար շերտը, 1985–1986 թթ. Էջմիածնի շրջանի Գրիբոյեդով գյուղում բանահավաք Սվետլանա Վարդանյանի գրառումներից: Երրորդ շերտը՝ 1990-ական թվականներին Սվետլանա Վարդանյանի և Ալվարդ Ղազիյանի կողմից Երևանում գրառած նյութերից:

Բնագրերը ներկայացված են չորս բաժիններով՝ արձակ պատմողական բանահյուսություն (հեքիաթներ, ավանդություններ, հանդատեղերի, աղբյուրների, ջրաղացների և սրբավայրերի անուններ, սնահավատական զրույցներ, հավատալիքներ, երգիծական, կենցաղային, կենդանական զրույցներ, հուշապատումներ, հուշեր՝ Ղարաբաղում կատարված տարբեր իրադարձությունների և 1988–1990 թթ. Բաքվում տեղի ունեցած դեպքերի մասին, ասութային բանահյուսություն), քնարական բանահյուսություն (հայրենասիրական, սիրային, կենցաղային, մանկական երգեր, սգերգեր, շուտասելուկներ. հանգավոր ասելուկներ), սովորություններ (բարքեր, վարքի կանոններ, մանկական խաղեր), հավելված (աշուղական երգեր, քառյակներ): Ասութային բանահյուսության նմուշներից առկա են առած-ասացվածքները, օրհնանք-բարեմաղթանքները, անեծքներն ու հանելուկները: Սակավ են աղոթքները. «Տեր Աստվա՜ծ, մեր բալան պահե, սովը, ծարավությունը, դավին մըզանա հեռե պահե» [8(378), էջ 283]:

1977 թ. գրառումներում բանասացների ազգագրական կազմը բազմաշերտ է (Արցախ, Զանգեզուր, Ղարս, Գանձակ): 1985-1986 թթ. գրառումների բանասացները ծագումով պատկանում են Նուխիի և Արցախի ազգագրական շրջաններին, իսկ 1990-ական թվականների գրառումների բանասացները գերազանցապես Արցախ ազգագրական շրջանի ներկայացուցիչներ են: Բանա-

սացների ժանրագիտական կազմը և բազմաշերտ է՝ արհեստավորներ, ծառայողներ, ուսանողներ, զինվորականներ: Նրանց սեռատարիքային խմբերն աչքի են ընկնում ազգագրական բոլոր շրջաններին բնորոշ օրինաչափությամբ: Վիպական բանահյուսության նմուշներ և քաղաքական անցքերին վերաբերող զրույցներ պատմում են հիմնականում տարեցները, կենցաղային, երգիծական բնույթի զվարճապատումներ և հանելուկներ՝ միջին տարիքի և սեռի ներկայացուցիչները, հուշապատումներ ու քառյակներ՝ խառը տարիքի և սեռի բանասացները:

Բոնագաղթվածներ Սոնյա Ամիրյանի, Լարիսա Գալուստյանի, Արևիկ Զաքարյանի և այլոց նկարագրած ահասարսուռ տեսարանները, ցավոք, վիպական զրույցներ չեն, այլ քստմնելի իրապատումներ: Հուսանք, որ Բաքվի հայոց ասութային բանահյուսության նմուշներից գոնե մեկը երբևէ կխոսվի «արնոտ բերանով մարդակերների» խղճուկ հուզաշխարհը. «Աբուռը տվալ ըն չանը, կերալ չի» [7(318), էջ 280]:

Ժողովածուի բնագրերի լեզուն թողնված է անփոփոխ՝ կիրառելով նոր ուղղագրություն: Այն ունի ծանոթագրություններ, բարբառային բառերի բացատրական բառարան, որն ընդգրկում է բանահյուսական նյութերում առկա դժվար հասկանալի ու փոխառյալ բառերի բացատրությունները: Ծանոթագրություններում լուսաբանված են բանասացների ապրած միջավայրի, բնօրրանի նյութերի գրառման վայրի, ծագման հայրենիքի, գրառման ժամանակի, կենցաղավարման հանգամանքները: Տրված է ժողովածուում հանդիպող հմտառատագրությունների բացատրությունը. ընդգրկված նյութերի ժանրային թվաքանակը հեքիաթներ (41), ավանդազրույցներ (10), զրույցներ(180), հուշապատումներ(28), խաղիկներ (32), ժողովրդական երգեր (28), առած-ասացվածքներ (35), անեծք-օրհնանքներ (61), հանելուկներ (14):

«Բաքվի հայոց բանահյուսությունը» առաջին անդամ է դրվում գիտական շրջանառության մեջ և կարևոր ներդրում է հայ հոգևոր մշակույթի ուսումնասիրության ոլորտում: Այն հնարավորություն է ընձեռում մեզանում եղած բանահյուսական հարուստ նյութն ամբողջացնելու, զուգադրելու և հայագիտությունը դարձնելու ռազմավարական գերակա ուղղություն պատմամշակութաբանական ընդհանուր գործընթացներում:

Ժողովածուն արժանի տուրք է ժողովրդագիտության զարգացման, բանասացների և բանահավաք-բանագետների անխոնջ աշխատանքի, մեր կողքին ապրած (Բարխուդար Ղազիյան) և ապրող (Սվետլանա Վարդանյան և Ալվարդ Ղազիյան) մարդկանց անձնադիր նվիրման հանդեպ:

ԹԱՄԱՐ ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ